

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱԺ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 22-Ի ԱԺՈ-002-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻՆ ԱՄՐԱԳՐՎԱԾ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԵՎ ՄԻՆՉԵՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

4.1. կետի «Գիտություն» բաժնի՝

1-ին կետի 1)-ին ենթակետով նախատեսված «Մինչև 2017 թվականի ավարտը գիտական և գիտատեխնիկական գործունեության ոլորտը կանոնակարգող «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի համապատասխանեցումը արդի չափանիշներին» միջոցառման կատարման նպատակով ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից մշակվել է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծը: Նոր օրենքի նախագծում հստակեցվել և ներմուծվել են մի շարք հասկացություններ և ընդգրկվել նոր հոդվածներ, մասնավորապես, հստակեցվել են ՀՀ կառավարության և գիտության ոլորտում պետական կառավարման լիազոր մարմնի իրավասությունները, կանոնակարգվել են գիտության ոլորտում օտարերկրյա ներդրումների հետ կապված հարաբերությունները, արդիականացվել են ֆինանսավորման ձևերը: Բացի դրանից՝ սահմանվել են նոր հասկացություններ, ինչպիսիք են, օրինակ, գիտության ոլորտում պետական կառավարման լիազոր մարմին, հետազոտական համալսարան, գիտական դրամաշնորհ, գիտական կազմակերպության վարչական պաշտոն և այլն: Նախագիծը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ կառավարության քննարկմանը կներկայացվի մինչև 2017 թվականի նոյեմբերի 30-ը:

2-րդ կետի 1)-ին ենթակետով նախատեսված «Մինչև 2017 թվականի ավարտը մշակել գիտական կազմակերպություններում վարչական պաշտոններում աշխատանքային տարիքը 70 տարեկանով սահմանափակելու մեխանիզմների և համապատասխան օրենսդրական ակտերի նախագծերը» միջոցառման կատարման նպատակով ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի մարտի 30-ի N 45-Ա հրամանով ստեղծվել է ՀՀ պետական գիտական կազմակերպությունների և բարձրագույն ուսումնական հաստատությունների գիտական

ստորաբաժանումների պաշտոնների նկարագրերը և այդ պաշտոններին հավակնող անձանց առաջադրվող պահանջները մշակող միջգերատեսչական հանձնաժողով: Կայացել է հանձնաժողովի նիստ, որի արդյունքում ստեղծվել է աշխատանքային խումբ: Աշխատանքային խումբը մշակել է ՀՀ գիտական կամ գիտատեխնիկական պետական կազմակերպություններում պաշտոնների նկարագրերը: Մշակվել են նաև ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ ՀՀ գիտական և գիտատեխնիկական պետական կազմակերպություններում պաշտոնների նկարագրերը հաստատելու մասին հրամանի և ՀՀ կառավարության՝ գիտական և գիտատեխնիկական պետական կազմակերպությունների վարչական պաշտոնների անվանացանկը և դասակարգումը հաստատելու մասին որոշման նախագծերը, որոնք մոտակա ժամանակներս ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կդրվեն շրջանառության մեջ:

3-րդ կետի 1)-ին ենթակետով նախատեսված «2017-2022 թվականների ընթացքում իրականացնել երկակի նշանակություն ունեցող և պաշտպանական խնդիրներին միտված ծրագրերը» միջոցառման կատարման նպատակով անց է կացվել ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում երկակի նշանակության ծրագրերի աջակցության տրամադրման հայտերի ընտրության մրցույթը: Մրցույթի արդյունքում 2017 թվականի օգոստոսից ֆինանսավորման են երաշխավորվել 4 ծրագիր: Երկակի նշանակության ծրագրերի աջակցության հայտերի ընտրության մրցույթն ընթացիկ միջոցառում է, որը իրականացվում է 24 ամսյա պարբերականությամբ: Ֆինանսավորման են երաշխավորվում Ռազմարդյունաբերական համալիրի կարիքների համար ողջամիտ ժամկետում կիրառելի արդյունք ստանալու նախապայմաններ ունեցող, Ռազմարդյունաբերական համալիրի և Ռազմատեխնիկական գիտատեխնիկական խորհրդի կողմից հաստատված ծրագրերը:

3-րդ կետի 2)-րդ ենթակետով նախատեսված «2017-2022 թվականների ընթացքում իրականացնել կիրառական բնույթի, այդ թվում՝ տնտեսության պահանջներից բխող գիտատեխնիկական ծրագրերը՝ մասնավոր հատվածի հետ համաֆինանսավորման սկզբունքով» միջոցառման կատարման նպատակով ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի և Ռուսաստանի Դաշնության «Գիտության և տեխնիկայի ոլորտում փոքր ձեռնարկությունների զարգացմանն աջակցության հիմնադրամի» մինչև 2016 թվականի հունիսի 27-ին կնքված «Համագործակցության

մասին» համաձայնագրի շրջանակներում, ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 4-ի N 43-Ա հրամանի համաձայն հայտարարվել է կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական նախագծերի աջակցության «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ՌԴ ԻԱՀ-2016» միջազգային հերթական մրցույթը (վերջնաժամկետ՝ 2017 թվականի հոկտեմբերի 20):

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 12-Ի N 122-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ 102 ԵՎ 103-ՐԴ ԿԵՏԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԵՎ ՄԻՆՉԵՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 122-Ն որոշման N 1 հավելվածի 102-րդ և 103-րդ կետերով առջարկվող միջոցառումներն են՝

«102. Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը» միջոցառումը, որի կատարումն ապահովելու նպատակով ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից մշակվել է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծը: Միջոցառման կատարման ժամկետը սահմանված է մինչև 2017 թվականի նոյեմբերի 30-ը: Նախագիծը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ կառավարության քննարկմանը կներկայացվի սահմանված ժամկետում:

«103. Հայաստանի տեխնոլոգիական հետազոտական համալսարան ստեղծելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը» միջոցառումը, որի կատարման ժամկետը սահմանված է մինչև 2017 թվականի նոյեմբերի 30-ը: Նախագիծը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ կառավարության քննարկմանը կներկայացվի սահմանված ժամկետում: